

11.07. 2001թ.

ժ. 11.00

Մասնակցում էին՝

Ս. Մնացականյան (*Խորհրդի նախագահ*), Ա. Չիլինգարյան, Գ. Անանյան, Վ. Դավթյան, Յու. Պողոսյան (*Խորհրդի անդամներ*), Ա. Աղազարյան (*խորհրդի քարտուղար*)

Հրավիրված էին՝ Կ. Կույումջյան (*Պլանավորման և ծրագրամեթոդաբանական բաժնի պետ*) Ն. Մուշեղյան (*Ամփոփ վիճակագրության, հրատարակությունների և մարկետինգի բաժնի պետ*), Ա. Սաֆյան (*Միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ*), Ջ. Մազլուչանց (*Տնային տնտեսությունների բաժնի պետ*), Ռ. Հովհաննիսյան, Կ. Սելիքսեթյան (*Մեքենայական ծրագրերի և տեխնոլոգիաների բաժին*)

Օրակարգի նախագծում՝ վեց հարց.

1. ՀՀ 2001թ. մարդահամարի հարցաթերթը հաստատելու մասին.

/Ձեկուցող՝ Կ. Կույումջյան/

2. ՀՀ 2001թ. մարդահամարի ժամանակ օտարերկրյա պետություններում (միջազգային կազմակերպություններում)՝ ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություններում և հյուպատոսական հիմնարկներում աշխատող ՀՀ քաղաքացիների և իրենց հետ օտարերկրյա պետություններում բնակվող ընտանիքի անդամների, ինչպես նաև Հայաստանում՝ օտարերկրյա պետությունների դիվանագիտական, առևտրատնտեսական և այլ ներկայացուցչություններում, միջազգային կազմակերպությունների ներկայացուցչություններում աշխատող օտարերկրյա քաղաքացիների և իրենց հետ բնակվող ընտանիքի անդամների հաշվառման Կարգը հաստատելու մասին

/Ձեկուցող՝ Կ. Կույումջյան/

3. ՀՀ 2001թ. մարդահամարի ժամանակ փակ տարածքներում գտնվող անձանց հաշվառման կարգը հաստատելու մասին.

/Ձեկուցող՝ Կ. Կույումջյան/

4. ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության մարզային վիճակագրության վարչությունների 2000թ. ընթացքում կատարած ամփոփ աշխատանքների արդյունքը.

/Ձեկուցող՝ Ն. Մուշեղյան/

5. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

5.1 Հաշվետվություն 2001թ. հունիսի 5-9-ը Մոսկվայում կայացած «Աղքատության կրճատման ծրագրերը և դրանց ազդեցության գնահատումը» թեմայով Համաշխարհային Բանկի կողմից կազմակերպված գիտապրակտիկ սեմինարի վերաբերյալ.

/Ներկայացնող՝ Ջ. Մազլուչանց/

5.2 Հաշվետվություն 2001թ. հունիսի 11-22-ը մարդահամարի տվյալների մշակման հարցերին նվիրված Կիևում կազմակերպված սեմինարին մասնակցության վերաբերյալ.

/Ներկայացնող՝ Ռ. Հովհաննիսյան, Կ. Սելիքսեթյան/

5.3 Հաշվետվություն 2001թ. հունիսին Վիեննայի միացյալ ինստիտուտում կայացած վճարային հաշվեկշռի և միջազգային ներդրումային դիրքի վերաբերյալ դասընթացին մասնակցության և դրա արդյունքների վերաբերյալ.

/Ներկայացնող՝ Ա. Չիլինգարյան/

5.4 Հաշվետվություն 2001թ. հունիսի 11-13-ը Ժնևում կայացած Եվրոպայի վիճակագիրների կոնֆերանսի 49-րդ լիակազմ նստաշրջանի վերաբերյալ.

/Ներկայացնող՝ Ս. Մնացականյան/

6. Այլ հարցեր

ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի նախագահ Ս. Մնացականյանի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը: Առաջարկվեց, հաշվի առնելով տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման բնագավառի գծով ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամի բացակայությունը, հետաձգել ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության մարզային վիճակագրության վարչությունների 2000թ. ընթացքում կատարած ամփոփ աշխատանքների արդյունքների վերաբերյալ հաշվետվության մասին հարցի քննարկումը: ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 11.07.01թ. նիստի օրակարգի նախագիծը հաստատվեց համապատասխան փոփոխությամբ միաձայն:

/Քվեարկության արդյունքները- կողմ` 5, դեմ` 0, ձեռնպահ` 0/

Լսեցին`

1. ՀՀ 2001թ. մարդահամարի հարցաթերթը հաստատելու մասին

/Ձեկուցող` Կ. Կույունջյան/

Նշվեց, որ «Մարդահամարի մասին» ՀՀ օրենքի 7 հոդվածի համաձայն, ՀՀ կառավարությունը 29.06.2001թ. թիվ 585 որոշմամբ հաստատել է ՀՀ 2001թ. անցկացվելիք մարդահամարի ծրագիրը (հարցաշարը), որի հիման վրա մշակվել և Խորհրդի հաստատմանն է ներկայացվում ՀՀ 2001թ. մարդահամարի հարցաթերթը:

Գիտողություններ և առաջարկություններ.

Ա. Չիլինգարյան – խմբագրական բնույթի դիտողություններ,

- նպատակահարմար չէ մարդահամարի հարցաթերթը հաստատել առանց այն լրացնելու կարգի մասին Հրահանգի, ինչն անհրաժեշտ է նաև հարցաթերթը սահմանված կարգով պետական գրանցման համար,

- Բ.10 հարցում «Շենքի աղբատարով» բառերը հարկ է փոխարինել «Աղբատար խողովակով» բառերով, իսկ 3 կետի առաջ ավելացնել «Այլ եղանակներով» բառերը,

- խմբագրել Հ.32 –ի 1 կետը:

Ս. Մնացականյան

- ըստ ներկայացված դիտողությունների լրամշակել հարցաթերթը և Հրահանգի հետ միասին ներկայացնել ՀՀ ՎՊԽ 23.07.2001թ. նիստին` հաստատման:

Որոշեցին`

1. Հավանություն տալ ՀՀ 2001թվականի մարդահամարի հարցաթերթին.

2. Հանձնարարել ՀՀ ԱՎԾ մարդահամարի վարչության պլանավորման և ծրագրամեթոդաբանական բաժնին մինչև 19.07.2001թ. լրամշակել ՀՀ 2001թվականի մարդահամարի հարցաթերթը և լրացման կարգի մասին Հրահանգի հետ միասին ներկայացնել ՀՀ ՎՊԽ հաստատմանը:

/արձանագրային/

/Քվեարկության արդյունքները – կողմ` 5, դեմ` 0, ձեռնպահ` 0/

2. ՀՀ 2001թ. մարդահամարի ժամանակ օտարերկրյա պետություններում (միջազգային կազմակերպություններում)` ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություններում և հյուպատոսական հիմնարկներում աշխատող ՀՀ քաղաքացիների և իրենց հետ օտարերկրյա պետություններում բնակվող ընտանիքի անդամների, ինչպես նաև Հայաստանում` օտարերկրյա պետությունների դիվանագիտական, առևտրատնտեսական և այլ ներկայացուցչություններում, միջազգային կազմակերպությունների

ներկայացուցչություններում աշխատող օտարերկրյա քաղաքացիների և իրենց հետ բնակավոր ընտանիքի անդամների հաշվառման Կարգը հաստատելու մասին
/Ձեկուցող՝ Կ. Կույումջյան/

Նշվեց, որ Խորհրդի հաստատմանը ներկայացված փաստաթուղթը մշակվել է ՀՀ արտաքին գործերի նախարարության հետ համատեղ և պարունակում է անհրաժեշտ դրույթներ համապատասխան վայրերում ՀՀ քաղաքացիների հաշվառման իրականացնելու համար:

Որոշեցին՝

հաստատել ՀՀ 2001թ. մարդահամարի ժամանակ օտարերկրյա պետություններում (միջազգային կազմակերպություններում)՝ ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություններում և հյուպատոսական հիմնարկներում աշխատող ՀՀ քաղաքացիների և իրենց հետ օտարերկրյա պետություններում բնակվող ընտանիքի անդամների, ինչպես նաև Հայաստանում՝ օտարերկրյա պետությունների դիվանագիտական, առևտրատնտեսական և այլ ներկայացուցչություններում, միջազգային կազմակերպությունների ներկայացուցչություններում աշխատող օտարերկրյա քաղաքացիների և իրենց հետ բնակվող ընտանիքի անդամների հաշվառման Կարգը:

/Քվեարկության արդյունքները – կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

3. ՀՀ 2001թ. մարդահամարի ժամանակ փակ տարածքներում գտնվող անձանց հաշվառման կարգը հաստատելու մասին.

/Ձեկուցող՝ Կ. Կույումջյան/

Նշվեց, որ Խորհրդի հաստատմանը ներկայացված Կարգը մշակվել է ՀՀ պաշտպանության, ՀՀ ներքին գործերի և ՀՀ ազգային անվտանգության նախարարությունների հետ համատեղ փակ տարածքներում գտնվող անձանց հաշվառման իրականացնելու համար:

Որոշեցին՝

հաստատել ՀՀ 2001թ. մարդահամարի ժամանակ փակ տարածքներում գտնվող անձանց հաշվառման կարգի բոլոր դիտողություններով և առաջարկություններով խմբագրված տարբերակը:

/Քվեարկության արդյունքները – կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

5. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

5.1 Հաշվետվություն 2001թ. հունիսի 5-9-ը Մոսկվայում կայացած «Աղքատության կրճատման ծրագրերը և դրանց ազդեցության գնահատումը» թեմայով Համաշխարհային Բանկի կողմից կազմակերպված գիտապրակտիկ սեմինարի վերաբերյալ.

/Ներկայացնող՝ Ջ. Մազուչանց/

5.2 Հաշվետվություն 2001թ. հունիսի 11-22-ը մարդահամարի տվյալների մշակման հարցերին մվիրված Կիևում կազմակերպված սեմինարին մասնակցության վերաբերյալ.

/Ներկայացնող՝ Ռ. Հովհաննիսյան, Կ. Մելիքսեթյան/

5.3 Հաշվետվություն 2001թ. հունիսին Վիեննայի միացյալ ինստիտուտում կայացած վճարային հաշվեկշռի և միջազգային ներդրումային դիրքի վերաբերյալ դասընթացին մասնակցության և դրա արդյունքների վերաբերյալ.

/Ներկայացնող՝ Ա. Չիլինգարյան/

5.4 Հաշվետվություն 2001թ. հունիսի 11-13-ը ժնկում կայացած Եվրոպայի վիճակագիրների կոնֆերանսի 49-րդ լիակազմ նստաշրջանի վերաբերյալ.

/Ներկայացնող՝ Ս. Մնացականյան/

Որոշեցին՝

բոլոր հաշվետվությունների վերաբերյալ հաղորդումն ընդունել ի գիտություն:

/արձանագրային/

/Բվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

6. Այլ հարցեր

Խորհուրդը լսեց ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Չիլինգարյանի հաղորդագրությունը ՀՀ ԱԺ «Օրինաց երկիր» պատգամավորական խմբակցությունից ստացված հարցման (մտից) կապակցությամբ առաջացած հարցադրումների վերաբերյալ: Իրավիճակի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի դրույթներին համապատասխան ՀՀ ՎՊԽ կողմից 25.06.01թ. հաստատված «Վիճակագրական գաղտնիքի պահպանման կարգը» դեռևս որպես գերատեսչական նորմատիվ ակտ պետական գրանցման չի ենթարկվել, դեռևս չի ձևավորվել «վիճակագրական գաղտնիքի վերաբերյալ հարցերի կոմիտեն» և փաստորեն դեռևս սահմանված չեն վիճակագրական գաղտնիքի պահպանման յուրաքանչյուր միջավայրի համար աշխատանքի առանձին կանոններ:

Հաշվի առնելով վերոհիշյալը և նպատակ ունենալով ապահովել Հայաստանի Հանրապետությունում ամբողջական վիճակագրական տեղեկատվություն և դրա մատչելիություն, ինչպես նաև հաշվի առնելով պատգամավորական խմբակցության գրությանը պատասխանելու սահմանված ժամկետը, միաժամանակ նաև ուսումնասիրելով արդյունաբերության վիճակագրության և վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի բաժինների կողմից պատրաստված տեղեկանքները (որոնցից ՀՀ ՎՊԽ-ին պարզ դարձավ, որ «Գրանդ Տոբակո» ՓԲԸ-ն հանդիսանում է «ծխախոտի արտադրանքի արտադրություն» գործունեության տեսակի գծով մենաշնորհային գործունեություն իրականացնող, իսկ «սիգարետների ներկրում» ցուցանիշների գծով, այդպիսի գործունեության իրականացում (կամ մենաշնորհային դիրքի) արձանագրում տեղի չունեցավ):

Նիստում քննարկման ընթացքում ընդունվեց, որ ֆիլտրով և առանց ֆիլտրի սիգարետների արտադրության ցուցանիշները իրենց բնույթով, ընդգրկմամբ, կարևորությամբ չեն հանդիսանում վիճակագրության ամբողջականությունը խաթարող և հանդիսանալով վիճակագրական գաղտնիք, պրակտիկորեն կարող են բացահայտվել միայն դրանց արտադրության գծով մենաշնորհային դիրք գրավողի համաձայնության դեպքում:

Որոշեցին

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետությունում «սիգարետների արտադրություն» (բնեղեն և արժեքային արտահայտությամբ), «սիգարետների ներկրում» (բնեղեն և արժեքային արտահայտությամբ), «ծխախոտի ապրանքների արտադրությամբ զբաղվող կազմակերպությունների արդյունաբերա-արտադրական անձնակազմի միջին ցուցակային թվաքանակ» ցուցանիշների աղյուսակները (մասնավորապես, որ պատրաստվել են 1999, 2000, 2001թ անցած 5 ամիսների համար) պարունակում են վիճակագրական գաղտնիք, քանի որ որոշակի ջանքերի գործադրման դեպքում հնարավոր կլինի անուղղակի եղանակով որոշակիորեն պարզել կոնկրետ իրավաբանական անձի տվյալները (միկրոտվյալները):

2. Սահմանել, որ «սիգարետների արտադրություն» (և դրանից բխող «արդյունաբերա-արտադրական անձնակազմի միջին ցուցակային թվաքանակ») ցուցանիշների առումով

«Գրանդ Տոբակո» ՓԲԸ-ն վիճակագրական տեսանկյունով հանդիսանում է մենաշնորհային գործունեություն իրականացնող:

3. Սահմանել, որ վերը նշված ցուցանիշների չբացահայտումը կարող է էապես ազդել վիճակագրական տեղեկատվության ամբողջականության սկզբունքների պահպանման վրա և ՀՀ ՎՊԽ թույլատրում է հրապարակել (տարածել) նշված ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը այնքան ժամանակ, որքան որ կպահպանվեն օրենքով սահմանված և վերը նշված հիմքով բացահայտման պայմանները:

/արձանագրային/

/ԲՎԽարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Նախագահ

Ս. Մնացականյան

Քարտուղար

Ա. Աղազարյան